ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ», *հատոր I—V, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1962—1979 թթ.։*

«Հայ նոր գրականության պատմություն» գրախոսվող հնգհատորյակը, որ հրատարակել է Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտը 1962—1979 թթ. ընթացքում, արդյունք է գրականագետ ավագ, միջին և երիտասարդ սերունդների շուրջ քսանամյա տքնաջան կոլեկտիվ աշխատանքի։ Այն իրականացվել է մեր նոր գրականության լավագույն մասնագետների ուժերով։ Հնգհատորյակի աշխատանքները գլխավորել է գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժինը՝ վարիչ Ս. Սարինյանի ղեկավարությամբ։

«Հայ նոր գրականության պատմությունը» ժամանակագրորեն ընդգրկում է մեր գրականության պատմությունը, սկսած XVIII դարի վերջին քառորդից առ ի 1920-ական թվականները, այսինքն՝ հայկական կլասիցիզմի սկզբնավորումից մինչև սովետահայ գրականության սկզբնավորումը, մոտ 150-ամյա մի ժամանակաշրջան, որի ընթացքում ծնվել, հասակ է առել ու առնականացել հայոց նոր գրականությունը։

Հայ նոր գրականության պատմության պարբերացումը ըստ հատորների թեպետ կատարվել է պարզ ժամանակագրական սկզբունքով, սակայն ժամանակահատվածների ընտրությունը բնավ պատահական չէ, այլ յուրաքանչյուր հատված ներկայացնում է գրականության զարգացման որոշակի և բնութագրական էտապ, համապատասխան սոցիալ-տնտեսական, հասարակաքաղաքական և մշակութային կյանքի տեղաշարժերին։ Ըստ այդմ էլ գրականության զարգացման յուրաքանչյուր փուլ ընդգրկվել է մեկ հատորում և օժտվել ներածական ընդարձակ ուսումնասիրությամբ, նվիրված տվյալ պատմաշրջանի հայ հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի և գրականության հանգամանալից բնութագրմանը։ Ներածությանը հաջորդում են տվյալ ժամանակահատվածի նշանավոր հեղինակների կյանքի ու գործի գրապատմական քննությունները առանձին գլուխներով կամ էլ երկրորդական հեղինակների ստեղծագործությունների միագումար, ուրվագծային քննությունները, մեկ կամ մի քանի գլխի տակ, ըստ նրանց ստեղծագործության տեսակների («Այլ բանաստեղծներ», «Այլ արձակագիրներ», «Այլ դրամատուրգներ» խորագրերով)։ Այնպես ու յուրաքանչյուր հատորում հանգամանորեն ներկայացվում է գրականության զարգացման տվյալ պատմաշրջանի ամբողջական պատկերը՝ ժողովրդի հասարակական, տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի տեսադաշտի վրա։ Բացի այդ, յուրաքանչյուր հատոր ունի տվյալ պատմաշրջանի հայ գրականության ու մշակութային կյանքում կատարված բոլոր նշանավոր իրադարձությունների ժամանակագրությունը ըստ տարիների, անդամ ամիսների և օրերի (եթե հայտնի են), որով լրացուցիչ կերպով ապահովվում է գրականության պատմության փաստագրական-տեղեկատվական կողմը (կազմող՝ Ս. Շտիկյան)։ Յուրաքանչյուր հատոր օժտված է նաև անվանացանկով, որը մեծապես դյուրացնում է դրանց օգտագործումը։

Նշածս իրողությունները դիտական այն սկզբունքային նախադրյալներն են, որոնց հիմունքներով իրականացվել է հայ գրականության այս նորաստեղծ պատմությունը։

Հայ նոր գրականության բաժինը և մանավանդ խմբագրական խիստ ակտիվ ու գործունյա հանձնաժողովը (որն, ի դեպ, կազմված է եղել հիմնականում գրախոսվող աշխատությանն անվանի հեղինակներից՝ Ա. Ասատրյան, Ա. Ինճիկյան, Էդ. Ջրբաշյան, Խ. Սարգսյան, Ս. Սարինյան, Ս. Աղաբաբյան, Գ. Հովհան, Վ. Նալբանդյան) գրականության պատմության սկզբունքները մշակելիս հաշվի է առել հայ գրականության պատմության նախընթաց փորձն ու արդյունքները, իսկ շարադրանքի ընթացքում ելել սովետահայ գրականագիտության, պատմագիտության, փիլիսոփայության, տնտեսագիտության, արվեստագիտության ձեռքբերումներից, ինչպես նաև 50—70-ական թթ. սովետական գրականագիտության առչև ծառացած տեսական-մեթոդաբանական խնդիրներից։ Անցյալի դրական փորձի, սխալների ու վրիպումների, հայագիտության տարբեր բնագավառների նվաճումների, արդի գրականագիտության պահանջների

էմպլեքսային-համակողմանի հաշվառումը հնարավորություն է ընձեռել աշխատության հեղինակներին ու խմբագրությանը հնարավորին չափ խոր, բազմաբարդ կապակցությունների ու բազմանիստ հիմքերի մեջ բացահայտել ու պատմականորեն ընդհանրացնել հայ նոր գրականության ծագման ու զարգացման մեկուկեսդարյա պատմական պրոցեսն իր վերելքներով ու վայրիվերումներով. գրական, հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների և ուղղությունների, սոցիալ-փիլիսոփայական տարբեր ուսմունքների, բարոյագիտական ու գեղագիտական, հաճախ իրարամերժ սկզբունքների սուր բախումներով և վերանորոգումներով։ Այս տեսակետից բացառիկ արժեք են ներկայացնում գրական առանձին պատմաշրջաններին նվիրված ներածական ընդհանրացնող ուսումնասիրությունները, գրված անվանի գրականագետներ Ա. Ինճիկյանի, Գ. Ստեփանյանի, Ս. Սարինյանի, Էդ. Ջրբաշյանի կողմից..ուր գրականության զարգացման ընթացքը դիտված է, քննված ու պատճառաբանված ժողովրդի սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի. միով բանիվ՝ նրա կոնկրետ պատմական գոյի ու գիտակցության բազմաձև ու տարաբնույթ կապերի ու կապակցությունների մեջ։ Գրապատմական նման ընդհանրացնող բնույթ են կրում տվյալ շրջանի գրականության յուրահատուկ բաժին կազմող առանձին ուղղությունների, ժանրերի, տեսակների վերաբերյալ տեսական-պատմական ակնարկները (հայկական կլասիցիզմ. հրապարակախոսություն. դարասկզբի հայ քննադատները. մարքսիստ քննադատները. մեմուարային գրականություն, գյուղագրություն. աշուղական բանաստեղծություն, երկրորդական արձակագիրների, բանաստեղծների. դրամատուրգների վերաբերյալ ուրվագծային գլուխները), որոնք արդյունք են արխիվային ֆոնդերի, պարբերական մամուլի մանրակրկիտ պրպտման, ցաքուցիր գրական երկերի. կենսագրական տվյալների հավաքման, համակարգման, ընդհանրացման ջանադիր աշխատանքի։

Բայց գրականության պատմության բուն միջուկն ու էությունն են կազմում առանձին, այն էլ նշանավոր հեղինակներին վերաբերող մենագրական գլուխները, որոնց մեջ. ճնշող մեծամասնությամբ, ժանրային-ժամանակագրական սկզբունքով, գրականագիտական խոր, մանրակրկիտ հետազոտության են ենթարկված նրանց գրական ժառանգությունը, որը մեծ մասամբ դիտված է ոչ թե մեկուսի, այլ դրապատմական նախորդ ու հետնորդ շրջանների սերտ կապի տեսանկյունից. բացահայտված հեղինակների ստեղծագործական էվոլյուցիան, պատմականորեն ու տեսականորեն ընդհանրացված են նրանց խաղացած դերն ու նշանակությունը հայ գրականության պատմական զարգացման ընթացքում։ Մենագրական գլուխների մեծ մասի գրականագիտական բարձր պրոֆեսիոնալ մակարդակը, շարադրանքի անուրանալի արժանիքները պայմանավորված են մի շատ կարևոր հանգամանքով։ Գրախոսվող աշխատության հեղինակ-գրականագետների ճնշող մեծամասնության համար իրենց հետազոտած գրողներն ու բանաստեղծները, գրական տեսակներն ու երևույթները եղել են ոչ թե պատահական, ինստիտուտի կողմից սոսկ պաշտոնապես հանձնարարված, այլ դրանք եղել են երկար տարիներ նրանց մասնագիտական հետազոտությունների կամ նախասիրությունների առարկա և վաղուց ի վեր արժանացել նրանց կողմից մենագրական ուսումնասիրությունների։ Հայ նոր գրականության գրախոսվող պատմությունը ստեղծվել է փաստորեն մեր երեկվա և այսօրվա գրականագիտության ընտրանու կողմից, հանգամանք, որն իր մասնագիտական բարձր կնիքն է դրել այս հնգահատոր աշխատության գիտական որակի վրա։ Բացի այդ, գրողների մենագրական դիմապատկերներում գրեթե հաղթահարված է դրանց հիմք ծառայած մենագրությունների հեղինակային սուբյեկտիվիզմը, հօգուտ դրապատմական օբյեկտիվիզմի։

Թվարկված այս բոլոր արժանիքների շնորհիվ, գրախոսվող աշխատության հեղինակային բաղադրամարդ անձնակազմին ու խմբագրությանը հաջողվել է ստեղծել գրականագիտության արդի պահանջները բավարարող հայ նոր գրականության գիտական համակարգված, ամբողջական պատմություն, ուր դրական դեմքերն ու երևույթները քննված ու դիտված են իրենց պատմական զարգացման ու փոխակերպությունների ընթացքում, հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի լայն տեսադաշտի վրա, դրական ժանրերը, գրականության տեսակները, դրանց գաղափարական բովանդակությունը, դրական դեմքերի հանդես գալը դիտված ու պատճառաբանված է ազգային-հասարակական ու միջազգային քաղաքական կյանքում, ժողովրդի սոցիալական հոգեբանության, քաղաքական ձգտումների, բարոյագիտական ու գեղագիտական բնորոշումների մեջ կատարվող պատմական տեղաշարժերով։ Ընդ որում, դրական դեմքերն ու երևույթները, գրական շարժումներն ու փոփոխությունները հետազոտված են ու դիտված ոչ թե սոսկ ազգային նեղ շրջանակներում, իբրև տեղական ինքնարավ երևույթներ, այլ ռուս և եվրոպական գրականության ու մշակույթի զարգացման ընդհանուր պրոցեսի սերտ առնչությամբ։ Բացի այդ, գրախոսվող հատորներում գրեթե իսպառ հաղթահարված է

անցյալում հաճախ դրսևորվող հայկական երկու մեծ հատվածների՝ արևելահայ ու արևմտահայ գրականության ու մշակույթի առնչության անջրպետը և այդ զույգ հատվածների գրականությունը դիավոր է ու հնտագոտված իրրև ազգային-հասարակական միևնույն գրգռումներից ու ձգտումներից կոյացած մեկ միասնական ամբողջություն։

Թերություններ ու թերացումներ այս աշխատության մեջ, անշուշտ, կան և չէին էլ կարող չլինել, քանզի այն ստեղծված լինելով երկար ու ձիգ տարիների ընթացքում հեղինակային մի բազմամարդ կոլեկտիվի կողմից, որի յուրաքանչյուր ներկայացուցիչ ունենալով իր անհատական խառնվածքը, գրականագիտական ոճն ու ճաշակը, անձնական նախասիրություններն ու ունակությունները, բնականաբար, պետք է հանգեցներ աշխատության տարբեր գլուխների գիտական շարադրանքի ոչ միասնական որակի։ Թեպետ խմբագրությունը կարողացել է հիմնականում հաղթահարել տարբեր հեղինակների շարադրանքների ոճական տարբերությունները և այն արտաքուստ վերածել ոճական միասնության, սակայն անհնարին է եղել անել անկարելի՝ տարբեր հեղինակների շարադրանքներին հաղորդել գիտական միասնական որակ։ Այստեղից էլ առաջանում է գրականության պատմության տարբեր գլուխների որակային տարբերությունները. որոշ գլուխներ գրված են գրականագիտական փայլուն տաղանդով, իսկ որոշ գլուխներ գիջում են դրանց։

Մեկ այլ թերացում. գրախոսվող աշխատության մեջ հեղինակների գգալի մասը ուշադրությունը սևեռելով բանաստեղծ-գրողների երկերի դաղափարական բովանդակության բացահայտմանը, դրա պատմական արժեքի գնահատմանը, որն ինքնին, հատկապես մեր գրականության համար ունի գրապատմական շատ կարևոր խնդրի արժեք, հաճախ աչքաթող է արել կամ զանց է առել գրական-բանաստեղծական երկերի գեղարվեստական հատկանիշների, գրական տեսակների զարգացման մեջ տվյալ հեղինակի բերած նորամուծությունների, նրա գեղարվեստական խոսքի առանձնահատկությունների բացահայտումներն ու քննությունները, այսինքն՝ այն սպեցիֆիկ-գեղարվեստականը, որը մի հեղինակին տարբերում է մյուսից։

Սա ոչ թե գրախոսվող աշխատության թերությունն է միայն, այլ մեր երեկվա, մասամբ և այսօրվա գրականագիտության թերացումը ընդհանրապես։ 1970-ական թվականներից դդայապես փոխվեցին գրական երկերի գնահատման չափանիշները, առավել կարևոր ու առաջնակարգ տեղ սկսեցին հատկացնել գրական երկերի գեղարվեստական-տիպաբանական հատկանիշներին, մի պատմական հանգամանք, որն իր արտացոլումն է գտել նաև վերջին քսան տարվա ընթացքում ստեղծված հայ նոր գրականության պատմության տարբեր հատորներում։

3-րդ, 4-րդ և 5-րդ հատորների ներածություններում (հեղինակներ՝ Ս. Սարինյան, Էդ. Ջրբաշյան), օրինակ, զգալի տեղ է հատկացված գրական պատմաշրջանների տեսական-գեղագիտական գնահատմանը, գրական հոսանքների, ուղղությունների, ժանրերի պատմական հերթագայությանը, փոխակերպություններին ու զարգացմանը, քան, դիցուք, 1-ին և 2-րդ հատորների ներածություններում, որտեղ նման խնդիրները շոշափված են շատ հպանցիկ։

Նշված և չնշված այլ կարգի թերությունները բնավ չեն կարող նսեմացնել հայ նոր գրականության հնգհատորյա պատմության դիտական ու պատմական այն խոշոր, մնայուն արժեքը, որը զայիս է իր անանցելի տեղը գրավելու հայ մշակույթի պատմության մեջ ընդհանրապես և գրականագիտության պատմության մեջ մասնավորապես։ Եվ երբ նկատի ենք առնում հայ նոր գրականության պատմագիտության նախորդ փորձն ու մանավանդ արդյունքները, հատկապես 1940—1950-ական թթ. լույս տեսած եռագիրք պատմության զույգ հրատարակությունները, որոնք ունեին սոսկ դպրոցական-ուսումնական նպատակներ, ապա չենք կարող գոհությամբ և անդամ հպարտությամբ շարձանագրել, որ այժմ ունենք մեր նոր գրականության դիտական համակարգված պատմությունը. այն գալիս է լիուլի բավարարելու ոչ միայն գիտական հասարակայնության մասնագիտական, այլև ուսանողության և առհասարակ ընթերցող լայն զանգվածների պահանջները։ Եվ գրականության այդ պատմությունը ոչ թե մեկ անհատի մտքի արդյունք է, այլ լավագույն գրականագետների մի քանի սերունդների, որն իր մեջ է ամփոփում սովետահայ գրականագետների վերջին մի քանի տասնամյակների գիտական նվաճումները, հետևաբար և դառնում հիմնարար, ծանրակշիռ և մնայուն արժեք հայ գրականագիտական մտքի պատմության մեջ։

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր